

ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

Տ. ՇԱՀԵ ԱԲԵՂԱ ԱՆԱՆՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ` ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 մայիսի 2006 թ.)

«Բայց զոր Աստուած յարոյց, ոչ ետես զապականութիւն»:

«Նրան, ում Աստված հարություն տվեց, ապականություն չտեսավ»:

(Գործք ԺԳ 37)

Հարության հիսնօրյա հիշատակության այս չորրորդ կիրակին Կարմիր է կոչվում: Գարնանային իր այս անվանման համար պարտական ենք թերևս մեր Եկեղեցու հայրերին, որոնք իմաստուն կերպով դասակարգել են Հարության հիշատակության այս յոթ կիրակիները` իբրև հիշատակություն և իբրև հիմք ընդունելով Գործք Առաքելոցի հետևյալ խոսքերը. «Նա իր չարչարանքներից հետո իրեն կենդանի ներկայացրեց նրանց առաջ շատ ապացույցներով` քառասուն օրերի ընթացքում երևալով նրանց և խոսելով Աստծու արքայության մասին» (Գործք Ա 3):

Այժմ, գարնանային այս արևաշող օրերին, Եկեղեցու այս ըմբռնման համաձայն Քրիստոս քայլում է մեզ հետ: Ամեն թուփ ու ցողուն, բնության ամեն մասնիկ զգում է Քրիստոսի ոգեփոխիչ շունչը, որովհետև մեր ընկալման համաձայն, ինչպես որ երկու հազար տարիներ առաջ Քրիստոս Գալիլիայի ծովեզերքին շրջում էր Իր հարությունից հետո Իր աշակերտների հետ, այնպես էլ հիմա խորհրդաբանորեն ներկա է այստեղ` այս աշխարհի վրա:

Հավատացյալ հոգին հեշտությամբ կարող է սավառնել Ղուկաս ավետարանչի այս պատմական խոսքերի խորքը և իրապես զգալ Քրիստոսի ներկայությունը: Կարող ենք մի պահ երևակայել, թե ինչ անփոխարինելի էին այդ քառասուն օրերը առաքյալների համար: Նրանց ամեն մի սպասումը, հույսը, լուսեղեն երազն այլևս իրականություն էր: Անհավատ Թովմասը նույնիսկ իր ձեռքերով շոշափել էր Տիրոջ խոցված կողը: Քրիստոսի գորովալից աչքերը հարության հույսով էին լցրել Մարիամ Մագդաղենացու հոգին: Երուսաղեմի փոշոտ ու բազմամբոխ փողոցները մի պահ կարծես վերածվել էին արքայական պալատների, դարձել էին Սողոմոն Իմաստունի ստեղծած այն պողոտաները, որոնցով երբեմն Իսրայելի փառքը` Սողոմոն արքան, անցնում էր իր կառքով: Այն ժայռերը, որոնք Քրիստոսի խաչելության ժամանակ իրենց լերկ գագաթներով ասես դահիճների ճաղատ գլուխներն էին հիշեցնում, այլևս ցնծում էին, ամբողջ Երուսաղեմը ցնծության մեջ էր: Քրիստոսի հարուցյալ ոտնահետքերն ասես նոր արժեք և խորհուրդ էին հաղորդել այդ քաղաքին: Եվ, անշուշտ, առաքյալներից յուրաքանչյուրն իր հոգու մեջ զգում էր Քրիստոսի այդ

ներկայությունը: Նրանց համար այլևս կապ չունեք, որ Քրիստոս մարմնապես այլևս իրենց հետ չէ: Նրանք զգում էին այդ իրական ներկայության շունչը:

Քրիստոսի հարությունը բացառիկ արժեք էր և է մարդկանց ու աշխարհի կյանքում: Այն նոր առաքելության սկիզբ է դեպի մարդու ներաշխարհ, դեպի մարդու հոգեկան վերափոխում: Մեր կյանքում մենք սովորաբար երկար ու հարատև պայքարից հետո է, որ ավարտի ենք հասցնում ինչ-որ մի բանի բարեփոխումը: Հաճախ մենք նույնիսկ սխալվում ենք, բռնի ուժի ենք դիմում, քանդում ենք նվիրական արժեքներ: Երբեմն նույնիսկ նպատակի թվացյալ վեհությունը արժեզրկում է դրան հասնելու միջոցների արդարացիությունը: Այո՛, մենք այդ պահին ուժեղ ենք, հաղթանակած ենք մտնում ասպարեզ, մենք վերջապես մեր նպատակին հասել ենք, բայց մի պահ դառը հիասթափություն ենք ապրում: Պայքարից հոգնած, բայց հաղթանակից արբեցած մեր ծնկները դողում են ինչ-որ զարմանալի կարոտից: Մենք, որ այդքան ուժեղ էինք, մեր հոգու մեջ պարտվում ենք, մի պահ կարծես մեզ մնում է հիշել գրողի խոսքերը. «Ինչ-որ մի բան, ինչ-որ մի տեղ սխալ է»:

Աստվածորդու կյանքը նույնպես հարատև պայքար էր մահվան և կյանքի միջև: Բայց Քրիստոս Իր կյանքի ընթացքում՝ երեսուներեք տարիներին, երբեք ու երբեք չնոռացավ Աստծու կամքը: Նա Իրեն հարցեր ուղղողներին ասում էր. «Եվ Իմ դատաստանն արդար է, որովհետև ոչ թե Ես Իմ կամքն եմ կատարում, այլ Նրա, Ով Ինձ ուղարկեց»:

Խաչելությունից առաջ Գեթսեմանիի պարտեզում Նա լուռ մրմունջով Ինքն Իրեն հանձնեց Աստծու ձեռքը. «Հայր, ոչ թե Իմ կամքը, այլ Քո կամքը թող լինի»: Քրիստոսի այս բացարձակ հնազանդությունը Աստծու կամքին հետագայում պիտի ներշնչեր առաքյալներից թերևս ամենանշանավորներին և հենց իրեն՝ Պողոս առաքյալին, որ համարձակ կերպով պիտի քարոզեր հեթանոսներին և արտասաներ իր նշանավոր խոսքերը. «Բայց գոր Աստուած յարոյց, ոչ ետես զապականութիւն»:

Հիրավի, մեր կատարած աշխատանքը, դրա արդյունքը իրական արժեք է ստանում, երբ հիմնված է Աստծու բարեգութ կամքի վրա, երբ այնտեղ ներկա չէ մեր քանդիչ եսը: Ամեն բան, որ մենք հանձնում ենք Աստծո ձեռքը, արդեն իսկ արբագործվում է Աստծո կողմից: Քրիստոսի օրինակը լավագույնն է մեզ համար մեր կյանքում գործադրելու: Փրկչի բոլոր հետևորդները՝ առաքյալները, իրենք իրենց Աստծո կամքին էին հանձնում: Պողոս առաքյալը երբ գրում է, թե ինքը մի քանի անգամ քարկոծվեց, թե փոթորկից հետո նավաբեկության ենթարկվեց և մի խղճուկ փայտի կտորի վրա էր օրորվում ալիքների վրա, ասում է, որ այդ ժամանակ ինքն իրեն Աստծուն էր հանձնել: Այլևս մեր ամբողջ գործերը, մեր ամբողջ միտքը, մեր ամբողջ բանականությունն աշխատում է Աստծո գործերի և Աստծո ընթացքի համաձայն: Եվ այն ժամանակ, երբ մենք խոչընդոտի, դժվարության առաջ ենք կանգնում, Աստված է, որ ուղիղ ճանապարհի վրա է դնում մեր ընթացքը:

Նշանավոր մի գրույց կա, որ ցանկանում եմ ձեզ պատմել, և որը լավագույնս բացատրում է մարդու և Աստծո հարաբերությունը: Մի բարեպաշտ և հավատացյալ մարդ մահանում է և մահվանից հետո հանդիպում Աստծուն: Հրեշտակներն Աստ-

ծու առաջ գովաբանում են այս մարդուն, թվարկում նրա արդար գործերը, նրա աստվածավախ ընթացքը և երբ վերջացնում են, Աստված բռնում է այս մարդու ձեռքից և տանում ծովափ ու ավազի վրա ցույց տալիս ոտնահետքեր: Եվ ասում է Աստված. «Նայիր, սրանք այն ոտնահետքերն են, որ դու քո կյանքի ճանապարհին թողել ես, երբ անցել ես Իմ ձեռքը բռնած»: Երբ ավելի են առաջանում, մարդը նկատում է, որ ոտնահետքերը մեկով պակասում են, և դիմում է Աստծուն. «Ով Տեր, մի՞թե Դու այստեղ լքել ես ինձ»: Մակայն Աստված պատասխանում է. «Մարդ, այս պահին Ես բեզ գրկած եմ անցել քո դժվարությունների միջով»:

Այն պահին, որտեղ ոտնահետքը մեկով պակասում էր, Աստված թույլ չէր տալիս, որ մարդը իր ոտքը դիպցնի կյանքի խարող և այրող ավազի վրա: Ընդհանրապես մենք կյանքում մտածում ենք, որ երբ Քրիստոս իբրև թե մեզ հալածում է, երբ Քրիստոս մեզ մեր մտածումով լքում է, մենք այլևս մենակ ենք: Բայց երբ փորձում ենք մի պահ հիշել Հիսուսի կյանքը, հիշել Նրան միայնակ կանգնած խաչի առաջ, խաչը կրելիս, խաչի վրա գամված, մենք ակամա ինքներս մեզ պիտի հարց տանք. մի՞թե Նա՝ տիեզերքի արարիչը, մենակ չէր իր ամբողջ կյանքի ընթացքում և մարգարեական խոսքերի համաձայն էլ «Ամենքը Նրան լքեցին ու հեռացան»: Անգամ նրանք, ովքեր երեք տարիների ընթացքում տեսել էին Նրան և իրենց իսկ վկայությամբ շոշափել էին կյանքի խոսքը, կենաց բանը, նույնպես լքեցին Խաչյալ Փրկչին ու հեռացան: Մակայն Քրիստոս նրանց ճիշտ ուղու վրա դրեց և ասաց, որ այն պահից սկսած, որ Սուրբ Հոգին ձեզ վրա պիտի իջնի, Ինձ վկաներ պիտի դառնաք Երուսաղեմում, Մամարիայում և ամբողջ աշխարհում: Այդ միայնակությունը առաքյալների համար վերածվեց հարության խոսքի վկայության և քարոզության:

Կարմիր Կիրակին երկու խորհուրդ ունի, սիրելիներ, Աստծո բարեգութ կամքի և Նրա իրական ներկայության մեր կյանքից ներս: Մենք ենք, որ պիտի Աստծո շնչով և ներկայությամբ արժեվորենք Նրա հարությունը մեր կյանքից ներս: Գողգոթայի վրա թափված փրկչական արյունը գծեց մեր պարտականության ճամփան՝ նրանով ապրելու և նրանով գործելու պատգամով: Այդ արյունն է, որ այսօր Քրիստոսի մշտական ներկայությունն է այս երկրի վրա:

Սիրելիներ, հինանց այս շրջանին մեզ բացառիկ առիթ է տրվում բռնելու Քրիստոսի ձեռքից և Նրա հետ շրջելու ու աղոթելու: Նա դեռ այնքան բան ունի մեզ ասելու և ուսուցանելու: Ուրեմն աղոթենք Նրան մեր հոգու և մտքի ամբողջ գործությամբ. «Տեր Հիսուս, մեզ Քո ներկայությանը արժանի դարձրու և հաղորդ Քո սուրբ մարմնին և արյանը»:

«Շնորհք, Սեր եւ Խաղաղութիւն Տեառն Աստուծոյ մերոյ եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեանս», ամեն: